



ՄԵՌԵԼ ԿՐԱԿՈՂՆԵՐ

Ա.



Իստ երկիւղն ու յուսահատութիւնը տիրել էր գեղջուկներին, որովհետեւ չորս կամ հինգ հարիւր տանից բաղկացած գիւղում միջին թուով վեցեց կամ եօթից աւելի ննջեցեալ պատահելու դէպքը հազուագիւտ երեւոյթ էր նրանց համար: Պատահածն էլ լինում էր յետին թեյն ընկած ծեր, պառաւ և կամ օրապակաս ու ծաղկատար մանուկ:

Բայց 18.. թուին Ուզ. գիւղը կարծես նեոն էր մըտել ու բոլոր գեղջուկների պողպատէ առողջութիւնը վտանգել: Մի ամիս շարունակ ամեն երեկոյ ձորի հանգստարանում նոր նոր թումբ արած գերեզմանների վրայ մահագուշակ կրակներ էին բոցոտւում և այնտեղից նամ տուած վառօդի ծանր հոտը տարածւում էր գիւղում ¹⁾: Եւ, ո՛վ

¹⁾ Նոր գերեզմանի վրայ կրակ վառելու սովորութիւնը վաղուց, մինչեւ անգամ կռապաշտական ժամանակներից է մնացած.

հիւանդանում էր, ծառի վրայի դեղնած տանձի նման իսկոյն կաթում էր:

Այդ էր պատճառը, որ այնքան ուրախ ու աղմկալի Ուշ. գիւղն անապատի էր նմանում: Լքացել, շուարել էին ամենքը. ձեռներն էլ սրտալի բանի չէին տալիս խեղճ ռա. միկները. եռանդները հասել էր սաստիկ և ակորժակները կապուել, դառնացել հիւանդի պէս: Յուսահատութիւնից ոչ կերածներն էր աչքները գալիս և ոչ խմածները կոկորդները հասնում, այնքան թանկագին էր դարձել կեանքը:

— Ո՛ւմ հըմար աշխատե՛ւք, — ասում էին նրանք, — քանի որ գեղը գնում ա հեղեղի պէս:

Բայց երեկոյեան բոցոտուող և կամ գիշերուայ առկայծուող կրակների երկիւղալի տեսարանից ու տխրութիւնից պակաս երկիւղ և տրամութիւն չէր լջնում մարդու սրտին, երբ առաւօտեան ծեգին մի հայեացք էր ձգում նոյն հանգըստարանի ճանապարհին, որով խումբ. խումբ սգուոր կանայք՝ այտերն ու քթկալներն արտասուքով ողողած գնում էին դեռ յամրաքայլ և ապա հանգստարան էին հասնում թէ չէ, բազկատարած յանկարծ գրկում էին միմի նոր գերեզման, ընկնում երեսների վրայ և մաղները փետելուց, այտները ձևատելուց՝ արնալուծիկ անելուց բացի, այնպիսի սրտաշարժ և աղէտալի ծիչ, աղաղակ էին բալձրացնում դէպ երկինք, որ կարծում էիր, թէ սար, ձոր և դաշտ ու անտառ ողբակցում է նրանց վշտերին, այնպէս որ ինքն իրեն հալուում, մաշուում էր խղճահար սիրտը և մարդ տեղն ու տեղն արձանանալով, կարծես խորհում, տեսնում էր, որ այս աշխարհում ամեն ինչ, թէ՛ ուրախութիւն, զուարճութիւն, հարստութիւն... և թէ փառք ու մեծութիւն, բոլորն ունայնութիւն են...

— Ի՞նչ բան ա կեանքը. մարդս էսօր կա՛յ, էգուց չէ. — կարեկցութիւն շարժող ձայնով նկատում էին մեռւածները և ձեռքները կցում շուարած:

Բայց քրիստոնեայ դիւղացիք բացի կրակ վառելուց, գերեզմանի շուրջը փառօղի փռլի էլ են ցանում, որպէս զի մինչև գերեզմանի ամբանալը մեռելոտի բարշտուող գաղանները մեռելի դին չհանեն: Եւ իրաւ, գաղանները կրակից և վառօղի հոտից խիստ երկիւղ են կրում. սա արդէն փորձած բան է:

Մի երևոյթ աւելի աչքի էր ընկնում. Ուզ. դիւղացիք մահուան ահռելի կերպարանքը տեսնելով արդէն, ամենքը բարի մարդիկ էին դարձել ակամայ: Նրանք, հակառակ իրենց բիրտ բնաւորութեան, վարք ու բարքին, խիստ բարի մարդիկ էին դարձել. նոյն իսկ արնածալաւ, միմեանց ոխերիմ հակառակորդներն անգամ միմեանց մօտից առանց քաղցր բարի լիսն-ի, առանց քաղաքավարի ողջունի և մէկը միւսի «հալն ու ամալը» հարցնելու չէին անցնում:

Էլ չէին լսում ո՛չ հպարտ ու հերսոտուած տանուտէւրերի սպառնալիքները, ոչ անտաշ քնադխուիւաների անլուր հայհոյանքներն և ո՛չ էլ տխմար ամբոխի սովորական և վայրենաբար ճիրար ըռէխ կռծելը: Ընդհակառակն, այն բոլոր տգեղութիւններին փոխարինել էին սրտառուչ բարի լիս, բարի ըրիկունսններն, աղօթքներն ու մեղսաքաւ մըր-մունջները, բարեպաշտութիւնն ու հաշտութիւնը:

— Սա՛րգիս ջան, աղպէ՛ր, մահն էս ա եկել, դռներիս կաղնել ա. արի հացներս հա՛լալ անենք, — զղջացած սրտով ասում էր մէկը և մօտենալով իւր «բեգամաղ» հարեանին, համբուրում էր նրան:

Բացի դրանից, տարէնը երկու անգամ եկեղեցու երես չտեսնողն էլ օրական երկու անգամ ժամ էր վաղ տալիս և երեսը հաղար հաղար անգամ պատերն ու յատակը քմսեւլով, ապաշխարում և մահուան հաղորդ էր առնում:

Էլ ո՛րքան խունկ ու մոմ ասես, որ չէր սյրւում, ծխում ու պատերը մրոտում, սեւացնում, որքա՛ն մատաղ ճրագ, որ բացի կիրակիէն, լի օրերն էլ էին անում անպակաս: Այն խեղճ ռամիկը, որ խորովածի հոտը քթովն ընկնելիս բերնի ջուրը գնում, հալ ու մաշ էր լինում, բայց իւր անթիւ «պահասութիւնը» — կոռուբէգիառը և ծանր-ծանր հարկերի «սեւասիրտ» ծախսերն աչքի առաջ ունենալով ամբողջ տարուսյ մէջ չէր զմշում և կամ չէր վստահանում մի ուլ, մի հաւ անգամ մորթի, մսի համ առնի, այն բօթաբեր և մահահոտ ամսին արդէն երինջ ու արջառ էլ էր վայր ձգում, անխնայ զոհում Աստուծու համար՝ իւր այնքա՛ն թանկացած կեանքն անակնկալ մահից ազատելու յուսով...

Սակայն, անիրաւ նախապաշարմունքն իւր դարաւոր

ուժով ապառաժ մաշող ալիքների նման յաղթահարում էր ռամկական թոյլ հաւատին: — Զոհերն սւ մատաղները երբ տեսնում էր կայծակի արագութեամբ իսկոյն չեն փշրում նեոի ատամներն ու գերանդին և մահուան առաջն առնում, այլ ընդհակառակն, օր օրի վրայ նեոն աւելի է քաղում ու հնձում բան ամսի սկզբին, իսկոյն դէպի ճշմարիտ Աստուածն ունեցած հաւատքը փոխում էին և խարխափում նախապաշարման ու սնոտիպաշտութեան խաւարում: Նրանք, այն լոյսից զուրկ անմեղ մարդիկ բժշկի, «բոխտուրի» անունից խրոնած ասեմ, թէ փախած, այս և այն պառաւի, դեռտ. նուաղկոտի, հրէշաւոր երազներից և կամ եղնկին նայող հմայչի ահաւոր գուշակութիւններից սարսափահար եղած իբրև թուլասիրտ ոգիք, հիւանդը սայլն էին ձգում և փրկելու համար, չնայելով երբեմն հակառուջ, վնասակար ցրտին, անձրև և շոգին, կամ խաչն էին տանում կամ «փալչինների» մօտ և կամ կռներն ընկած տանում էին գերեզմանների տապանաքարերի մէջ գոյացած խոռոչներից անձրևի ջուր խմացնում, որ վախը կորչի կամ սիրտը տեղն ընկնի:

— Զէ, չէլաւ, նաչախս (հիւանդս) օր քանց օր աւելի ա մաշւում, պէտքա Սաչմալլուի մոլլի կուշտը տանել, — ասում էին շատերը և սայլը բշում, մոլլին գիր անել տալիս հիւանդի վղիցը կախ անում, որ «քաջքերը» գլխից դուրս փախչեն...

— Այ օրհնուածներ, մոլլի գիրը հիւանդին բան չի՛ շինիլ, չի՛ տուղջացնիլ, մարդ ուղարկեցէք թող գնայ քաղաքից մի «բոխտուրի» բերի. ախր էդպէս բան չի՛ լինիլ, որ դուք անում էք, մեղք են հիւանդները, — խաչի, հմայչի և կամ մոլլի դիմողներին նկատելով խորհուրդ էր տալիս փոքրի շատե ուսման, գրի հոտ առած մէկը, բայց զուր, խաւար ամբոխն էլի իւր էշն էր բշում:

— Զէ, խալլփա ջան, դոխտուրների բան չի:

— Թէկուզ հէնց դոխտուրի բան է՛լ ըլի, չենք բերիլ:

— Ինչո՛ւ:

— Նրա հըմար, որ գալիս բան չչինելուց սավահի, վերջը մեռնողի հագուստն ու տեղաշորն էլ կրակ են տալի երբմ, թէ շորիցը կփոխուէք, շորմը որդեր կան, —

բժշկին մեղադրելով պատասխանում էին նրանք և շարունակում իրենցը:

— Հա, սա (հիւանդութիւնը) դոխտո՛ւրի բան չի. եա Աստուծո՛ւ պատիժ ա, եա ո՛ւրիշ բան:

— Եանի ուրիշ ի՞նչ բան պէտքա ըլի, ապէր, — հարցրին շատերը:

— Մեռել կ'ընի խորթտամիշ ըլած (ղարթնած):

— Եդո՞վ, որ «խորթտամիշ» ըլած ըլի, Հանէս պապի:

— Նըքա՛շի, սաղ գեղը ետեիցը կ'առնի:

— Հա՛, դրուստ ա, Աստուած մի՛ արասցէ, էլ գեղըմը մարդ չի՛ մնալ, ո՛ւմ որ կանչեց, կ'ըտանի, — վկայեց մի այլ ծերունի ևս:

— Մի տարի էլ, — շարունակեց Հանէս պապը, — Աշդի գեղացիք ին սհէ կտուրում. ասեցին թէ՛ մեռել ա «խորթտամիշ» ըլել: Տէր Սարգիսը խիստ խելօք տէրտէր էր, վեկալաւ գերեզմանատանը գիշեր ցերեկ ղրաւուլ (պահապան) դրեց: Մի քշեր, կէս քշերին ղրաւուլն իմանում ա, որ մի գերեզմանից մի բարակ ձէն ա դուս գալիս: Նա էն սըհաթին վազ ա տալի գեղացոց իմաց տալի: Գեղացիք առաւօտը գնում են գերեզմանը բանդում տննում, որ մեռելը ըրիսի վրայ շուռ ա եկել ղնկնին էրգոացել, երեսը կարմըրել, վրթվրթոցն ընկել ու ձեռներից մինը խլալնքիցը հետ ըռէին ա կոխել կերել:

— Եդով, — անհամբերութեամբ ընդհատեց մէկը:

— Եդով ահից չիմ թողել են փախել, միան տէր Սարգիսը հանել ա ու խորթտամիշ ըլածի սրտըմը մի սուր պըհիր (ցից) վեր տուել սպանել:

— Բա էլ ո՞ւր էք դէս ու դէն ընկնում, էտ ա տհէ պէտքա ըլի, էլի. դէ՛հ, եդացնիլ միք ղրաւուլ դրէք գերեզմանուտում:

— Մենակ Աշդի գեղըմը չի պատահել էդ բանը, ուրիշ շատ տեղ են հանել ու սրտըմը եա պըհիր վեր տուել, եա թէ չէ, կարատել ու էլի գերեզմանն են ածել, — աւելացրեց Հանէս պապը:

— Տղերք, բա ո՞ւմ ղրաւուլ դնենք գերեզմանների վրայ, ո՞ւմ սիրտն ա պինդ, — ձայն տուին աջ ու ձախ:

— Սիմոնի, — մատնացոյց արին մէկին:

— 2է, չէ, աղպեր, եմ բանը չի, ահալի ա, — երկիւղած մերժեց Սիմոնը:

— Բայ Ամրջանանց Պետրոսին դրէք:

— 2է, չելաւ:

— Խի, Պետոն խու սրտոտ մարդ ա:

— Ղորթ ա, սրտոտ ա, ամա շատ քնուկ ա, կը քնի ու մեռելները որ բղաւեն է՛լ, մանալ չի:

— Դէ որ տէնց ա, Հոպլինին դրէք, նա համ սրտոտ ա, համ էլ իսկի քուն չունի:

— Հա՛. լաւ էք գտել, — հաւանեցին ամենքը և Հոպլինին պահապան դրին. բայց նա մի շաբաթ պահելուց յետոյ, ոչ մի ձայն չը լսեց և ո՛չ մի գերեզմանից:

Կրկին տիրեց յուսահատութիւնը, սակայն չխորթտամիչ» եղած մեղի միտքը նրանց զբաղեցնում էր շարունակ:

Բ.

— Հ՞ը. ո՞նց էք, ա՛ 2ատ. սաղ, սալամաթ:

— Փառք Աստծու, դառ հլա սալամաթ (անմեղ) ենք, տենանք: Դո՛ւք ո՞նց էք, Մինաս ապեր ջան:

— Մենք էլ ձեզ պէս, հլա լաւ ենք:

— Բարի լին, ա՛ խալիք:

— Աստծու բարին, Աւագ ջան. ինչ խաբար ձեր թաղիցը:

— Է՛. փա՛ռք ըլի Իրան. ինչ որ իր կամքն ա, կատարւմ ա, է՛լի, ի՞նչ ա գալի ձեռներս, — ցաւակցութեամբ աչքերը լցրեց Աւագը:

— Ի՞նչ կայ, Աւագ ջան, էլի գնացող ա եղե՞լ:

— Բա ի՞նչ, խեղճ Պողոսի տղէն մնաց ո՛չ:

— Վայի՛ յէ՛. ադա նիկօլ՛ը:

— Հա՛, — հեկեկալով պատասխանեց Աւագը:

— Վա՛շշ. ափսոս տղայ, ինչ տղայ է՛ր, — կարեկցութեամբ ափսոսացին ամենքը:

— 2է՛, արանքը կտոււմ չի՛, վերջներս եկել ա հալբաթ:

— Վերջներս որ եկած չինի, էրազ կտենա՞ն:

— Ո՛վ, ի՞նչ էրազ են տեհել, Վա՛րապետ:

— Հէնց նոր իմացայ. ասըմ են Ուլխանանց Բիքի ա-

պին՝ հեռի գեղիցս, հեռի ձեղանից, մի շա՛տ գէշ էրազ ա տեհեւէ:

— Ի՞նչ ա տեհեւէ:

— Էրազըմ մեր գեղն օրանայ (աւերակ) ա դառեւ ջըրով լցուել ու մուծը չանգն (մառախուղն) երեսոյն առել:

— Բա գարի չի գցիլ տուե՞լ: ¹⁾

— Գցիլ են տուել, ասըմ ա արամութիւն ա:

— Տիրացւի կուշտը չեն գնացե՞լ, Եփրեմիւերդին ի՞նչ ասըմ ա:

— Ընէլ ասում ա՛ ջըուրը լաց, արտասուենք ա, մուծը չանգն էլ չող ու ցաւ:

— Սաքնանց պուաւի կուշտն էլ են գնացել ղնկին մտիկ տալու համար. նա էլ ա տիրացւի պէս ասել, — լրացուցիչ տեղեկութիւն տուեց մի ուրիշը և աշխարհը կարծես մըթնացրեց ամեն համար:

— Ա՛ա շշ. էս ա օրէնը մինը գնըմ ա էլի՜, — ասում էին և ծնկներին խփում:

Բայց, յանկարծ ամե՛րի ուշադրութիւնը դարձաւ ձորի հանգստարանի կողմը, ուր գերեզմանների մէջ ման գալուց յետոյ, եդ դարձան և ձեռի նշան տալով խմրուած գիւղացիներին, կանչեցին շտապով:

— Գալուստ ապի՛, էէէ՛ Գալուստ ապի՛:

— Ի՞նչ ա, հէ՛յ:

— Ա՛յ, եդ խալխին իմաց տուր, թող դան, Սանամի տղի գերեզմանը վե՛ր ա գնացել (հոշն իջել է) եկէք տեսնենք էս ի՞նչ բան ա, էս ի՞նչ բան ա՛:

— Ը՛ն, — մատը կծելով բացականչեց մինը, — խեղճին լղացնելիս ես չէի ասըմ, թէ՛ հլէի քնած ըլի՛:

— Հա՛. զորթ. թաղելիս էլ ըռանգըն ըսկի մուլի ըռանգ չէր, — աւելացրեց մի ուրիշը:

— Ա՛բր կացէք, բա ինչի՞ էք շուարել. վեր կացէք գնանք. անպատճառ «խորթտամիջ» ա ըլել, որ հողը ցածրացել ա, — ասաց տանուտէրը և առաջ ընկաւ դէպի հանգըստարան:

¹⁾ Գարի գցել տալու և եղնկի հմայշութեան մասին տե՛ս «Մոռացուած աշխարհիս Գ. գրքի 225-րդ երեսը:

Մի ժամից յետոյ արդէն ամբողջ գիւղն այնտեղ էր ժողովուրդ եւ, եւ բա՛հ ու թի պատրաստած, Սանամի տղի գերեզմանը բաց էին անում:

Գ.

— Վա՛հ, շո՛ւռ ա եկել, շո՛ւռ ու ղուբէն (դագաղը) ըննով (արիւնով) լցրե՛լ, — դագաղի խուփը վեր առնելով երկիւղած բացականչեց, աղաղակեց օրտոտ Հոպլին եւ կարծես իւր աղաղակով սեւ օձ շարտեց ամբոխի վրայ, որ այնպէս գրո՛հ տուին ահոած եւ վախկոտները դուրս փախան հանգըստարանից:

Միւսներին մի բանի մարդիկ ծոցները բար դրած ¹⁾ արնալից դագաղով դուրս բաշեցին գերեզմանից Սանամի անբաղդ տղին, որին քնած (լետարգիական քնով) էին թաղել 40 օրից առաջ: Դուրս բարշեցին ու վայր ձգեցին գետնին:

Սանամի տղէն արթնանալով քնից, գերեզմանում շուռ գալով երեսի վրայ, կռծել էր դագաղի պատերը, կերել էր մատներն ու պատանքի մեծ մասն եւ խեղդուել արեան մէջ, թէեւ դեռ հազիւ նկատելի կերպով տրեփում էր էլի:

Տեսարանը խիստ ահալի եւ բստմեղի էր. բայց շնայելով դրան, հանգստարանից դուրս շտապ-շտապ պատրաստում էր աւելի սոսկալի եւ աւելի ահուելի տեսարան: Նախապաշարուած գիւղացիք, որ արթնանալը Աստուծոյ դէմ մեղք էին համարում, դուրսը ցախ ու փուշ էին կիտում տիզաչափ բարձր, որ «բաշող» կամ «կանչող» յանցաւոր մեռլին պատժեն կրակով:

Բո՛լ ա, (բաւ է) վառեցէ՛ք, տղերք, — վայրենաբար հրամայեց տանուտէր Աթոն, որ մի գաղանասիրտ մարդ էր գիւղում:

Հրաման տալուն պէս վառուեց կրակը եւ կէս ժամից արդէն բորբոքուեց ցախ ու փշերի դէզը եւ մեծ խարոյկ պատրաստուեց տգիտութեանը զոհ գնացած երիտասարդի դին այրելու համար: ²⁾

¹⁾ Ծոցը բար են դնում, որպէս զի սիրտները պնդի:

²⁾ Միակ եւ որբ էր Սանամի տղէն. գիւղում ոչ մի սրտացաւ

Սանամի տղի դին իւր դագաղով հանդերձ վերցրին սրտոտները և խարոյկի մէջ նետեցին, ապա, ոմանք երեսները զնջած և ոմանք հոտից քիթները բռնած հեռուից սկսեցին դիտել խարոյկը:

Դեռ մի առ ժամանակ այրւում, ճնճւստում էր դին: Բայց յանկարծ կայծակի մի սոսկալի որոտ լսուեց խարոյկի միջից:

Գիւղացիք սարսափահար ահռած և խիստ իրար անցած փախչում էին դէպի ձորն ու բլուրներ:

Սանամի տղի գլուխը խիստ տաքանալով խարոյկի մէջ պայթել, տրւքուել էր և ուղեղը ցրել դէս ու դէն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀ. ԺՈՒՂՈՒՐԵԱՆ

1898 թ. Թիֆլիս:



բարեկամ, աղբական շունէր, որ պաշտպանէր, թէև այդ էլ անկարելի էր, որովհետև վայրենի ամբոխը խիստ զայրացել էր: